Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-704[2]-26.01.2015-SS-010/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-185 օրենքի (այսուհետև՝ Օրենք) 7-րդ հոդվածը լրացնել նոր «ժզ» կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«ժզ) համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար:»:

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածը լրացնել նոր՝ 10.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«10.1 Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 – 500 000 դրամ:»:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՈՒ ԴԻԱԿԻԶԱՐԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ>>
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ
ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1.Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Արաիկ Հովհաննիսյան	Օրենքի նախագծի 1-ին հոդվածում <ազգային> բառից հետո լրացնել <և կրոնական> բառերը:	Ընդունվել է:	Օրենքի նախագծում <ազգային> բառից հետո լրացվել է <և կրոնական> բառերը:
2. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Արծվիկ Մինասյան	Օրենքի նախագծի 1-ին հոդվածը լրացնել <մարմինը և (կամ) աճյունը> բառերով	Ընդունվել է:	Օրենքի նախագծի 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը շարադրվել է նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝ <քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարություն՝ ազգային և կրոնական ավանդույթների համաձայն մարդու մահից հետո նրա մարմինը (աճյունը) կամ մահացածի աճյունասափորը հողին հանձնելուց կամ աճյունասափորը հուշապատում տեղադրելուց առաջ հրաժեշտի արարողություն»